ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մարտի 2026 թվականի N 314-Ա

ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերը, 9-րդ հոդվածի 5-րդ մասը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանն ամրացված 374,006,881.2 դրամ սկզբնական արժեքով գույքը՝ համաձայն N 1 հավելվածի, հետ վերցնել և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտին:

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանն ամրացված 3,288,400 դրամ սկզբնական արժեքով գույքը՝ համաձայն N 2 հավելվածի, հետ վերցնել և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Քրեակատարողական բժշկության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանն ամրացված 11,371,263 դրամ սկզբնական արժեքով գույքը՝ համաձայն N 3 հավելվածի, հետ վերցնել և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել Պրոբացիայի ծառայությանը:

4. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Դատական դեպարտամենտի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի և Պրոբացիայի ծառայության պետի հետ համատեղ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

19.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ